

ՀԱԳՄՉ 07.10

Առաջին հրատարակություն
1 հոկտեմբերի 2001թ.
Ներառում է փոփոխություններ 1, 2 և 3-ը

Ականազերծման գործողությունների կառավարման ուղեցույց

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՕ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախազգուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակասականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/>) կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>:

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակասականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն

ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)

2 United Nations Plaza, DC2-0650

Նյու Յորք, NY 10017

ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org

Հեռախոս՝ (1 212) 963 1875

Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Բովանդակություն	iii
Նախաբան	v
Ներածություն	vi
Ականազերբրծման գործողությունների կառավարման ուղեցույց	1
1. Ծավալ	1
2. Փաստաթղթեր	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	1
4. Ականազերծման գործընթաց	2
4.1. Պլանավորում	2
4.2. Նախապատրաստում	3
4.2.1. Տեխնիկական հետազոտություն	4
4.2.2. Մաքրման պահանջ	4
4.2.3. Ֆինանսավորում (ռեսուրսների կենտրոնացում)	5
4.2.4. Պայմանագրի պատրաստում	5
4.2.5. Վերապատրաստում	5
4.2.6. Տեղեկություններ	5
4.2.7. Մարքավորումներ և գործիքներ	6
4.2.8. Հավատարմագրում	7
4.3. Մաքրում	7
4.3.1. Մաքրման ընթացակարգեր	7
4.3.2. Ազատում պայթուցիկ զինամթերքից (ԱՊԶ)	7
4.3.3. Հատուկ կարողություններ	8
4.3.3.1. Ականներ հայտնաբերող շների (ԱՀՇ) կիրառում	8
4.3.3.2. Մեխանիկական ականազերծում	8
4.3.4. Որակի ապահովում (ՈԱ)	9
4.3.5. Համայնքային կապ	9
4.3.6. Անվտանգություն և աշխատանքի հիգիենա (ԱԱՀ)	10
4.4. Մաքրմանը հաջորդող աշխատանքներ	10
5. Որակի կառավարում (ՈԿ)	11
6. Պարտավորություններ	11
6.1. Միավորված ազգերի կազմակերպություն	11
6.2. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)	12
6.3. Դոնորներ	12
6.4. Ականազերծող կազմակերպություններ	12
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր	13
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	15
Հավելված Գ (Տեղեկատվական) Ականազերծման գործընթաց	17
Հավելված Դ (Տեղեկատվական) ISO 9000	18
Հավելված Դ-ի հավելում 1 (Տեղեկատվական) ISO 9001:2000-ի պահանջվող ընթացակարգեր	21
Հավելված Դ-ի հավելում 2 (Տեղեկատվական) ISO 9001:2000՝ ականազերծման գործողությունների ուղեցույց	22

Փոփոխությունների գրանցում	24
---------------------------------	----

Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱՕ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելատճերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱՕ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org/> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Ականազերծման գործողությունների ծրագրերի ստեղծման համար ընդհանուր սկզբունքներն ու պահանջներն արծարծվում են ՀԱԳՄՉ 02.10-ում: Սույն Ուղեցույցի ուշադրության կենտրոնում են ականազերծման գործողությունների կառավարման պահանջները:

“Ականազերծումը” իր բնորոշիչ տերմինի իմաստով իրականացվում է բազմաթիվ և տարբեր տեսակի կազմակերպությունների կողմից, օրինակ՝ ՀԿ-ներ, առևտրային ընկերություններ, ականազերծման գործողությունների ազգային թիմեր կամ զինվորական ստորաբաժանումներ (մարդասիրական ականազերծում իրականացնելիս): Դա կարող է մարդասիրական միջամտություն լինել կամ էլ կարող է զարգացման ծրագրի մի մասը կազմել, որտեղ շեշտը կդրվի ականազերծման գործողությունների ազգային կարողությունների զարգացման վրա: Չնայած մոտեցումների տարբերարությանը և հավանաբար նույնիսկ տարբեր նպատակներին/խնդիրներին, այնուամենայնիվ գոյություն ունեն համընդհանուր և առանցքային գործողություններ, որոնք համընդհանուր պարտականություններ են իրականացնում, և հենց դրանք են ուսումնասիրվում սույն Ուղեցույցում:

Ականազերծումը ներառում է մաքրման աշխատանքներ և ականներով հագեցած հաղատարածքների վերադարձ ականապատված համայնքներին բոլոր ականների և ՊՊՄ-ների վտանգների հայտնաբերման, հեռացման կամ ոչնչացման միջոցով: Ականազերծման գործողությունների արդյունավետ կառավարումը նպատակ ունի հողատարածքները մաքրել ապահով և արդյունավետ ձևով: Դա իրականացվում է կառավարման համապատասխան գործընթացների մշակման և կիրառման միջոցով, ղեկավարների և ականազերծողների հմտությունների հիմնման և շարունակական բարելավման միջոցով, ականների և ՊՊՄ-ների վտանգների վերաբերյալ ճշգրիտ և ժամանակին տեղեկությունների ձեռքբերման միջոցով, ապահով և արդյունավետ գործառնական ընթացակարգերի կիրառման միջոցով և համապատասխան ու արդյունավետ սարքավորումների գործածման միջոցով: Սակայն կառավարումը չի եզրափակվում միայն պլանավորմամբ և ընթացիկ առաջադրանքների վերահսկմամբ: Այն վերաբերում է նաև ընթացիկ փորձառությունների և ընթացակարգերի վերանայմանը՝ բարելավելու անվտանգությունը, արդյունավետությունն ու արտադրողականությունը, ինչպես նաև ապահովելու մշտական կապ ականազերծման գործողությունների և ականապատված համայնքների միջև:

Այն գործընթացը և ընթացակարգերը, որոնք նպատակ ունեն իրականացնելու կազմակերպության կառավարման համակարգի և գործառնական փորձառությունների այս շարունակական բարելավումը, սովորաբար կողջվում են Որակի կառավարում (ՈԿ): Կազմակերպության կողմից ՈԿ ցուցադրելու մեթոդներից մեկն է համապատասխանել ISO 9000-ին: Մեծ ծավալի ընդհանուր տեղեկություններ և վերապատրաստման նյութեր գոյություն ունեն ականազերծման գործողությունների ազգային կենտրոնների և ականազերծման կազմակերպությունների համար, որոնք կցանկանան/կնախընտրեն որդեգրել ISO 9000-ի մոտեցումը:

Սույն Ուղեցույցն ուսումնասիրում է ականազերծման գործընթացը և առաջարկում է կառավարման այնպիսի համակարգ, որն անհրաժեշտ է ապահովելու ականազերծման ապահով, արդյունավետ և արտադրողական իրագործում: Ուսումնասիրվել է ISO 9000-ի նշանակությունը և այն առաջարկվել է որպես կառավարման լավ փորձառությունները խթանելու հարմար շրջանակ:

Ականազերբժման գործողությունների կառավարման ուղեցույց

1. Ծավալ

Սույն Ուղեցույցը սկզբունքներ է սահմանում և ուղղություն է տալիս ականազերբժման գործողությունների արդյունավետ կառավարման վերաբերյալ:

Չնայած նրան, որ սույն Ուղեցույցի ուշադրության կենտրոնում է ականազերբում, այնուամենայնիվ այս սկզբունքները կարող են կիրառվել ականազերբժման այլ գործողություններում, այդ թվում նաև տեխնիկական գնահատման ազգային առաքելություններ, արդյունքների հետազոտումներ, Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ, MRE) ծրագրեր և կուտակված ականների վնասազերծում:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղեցույցի դրույթների մի մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն ուղեցույցում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

«Ականազերբժման գործողությունների ազգային մարմին կամ մարմիններ» (ԱԳԱՍ) տերմինը վերաբերում է ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնց պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերբժման գործողությունները: Հիմնականում Ականազերբժման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՍ կամ գործում է նրա անունից հակաականային բոլոր գործողությունների պարագայում: Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ այլ ճանաչված միջազգային կառույցը կարող է հարմար կամ անհրաժեշտ գտնել ստանձնելու ԱԳԱՍ-ի բոլոր պատասխանատվությունները կամ դրանց մի մասը և իրականացնել բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը:

«Ականազերբող կազմակերպություն» տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը (պետական, ոչ պետական/ՀԿ կամ առևտրային հաստատություն), որը պատասխանատու է ականազերբժման նախագծերի կամ առաջադրանքների իրագործման համար: Ականազերբժման կազմակերպությունը կարող է լինել առաջնային կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ:

«Ականազերբժման ստորաբաժանում» տերմինը վերաբերում է ականազերբժման կազմակերպության մի տարրին, անկախ նրա անվանումից, որը գործառնականորեն հավատարմագրված է ականազերբժման մեկ կամ ավելի կանխորոշված գործողություններ իրականացնելու, ինչպիսիք են տեխնիկական հետազոտությունները, տեղանքի նշագրումը, ձեռքի աշխատանքով ականազերբումը, ազատումը պայթուցիկ զինամթերքից (ԱՊԶ) կամ Ականներ հայտնաբերող շների (ԱՀՇ) թիմերի կիրառումը:

4. Ականազերծման գործընթաց

Ականազերծման կառավարման գործընթացը նկարագրված է Հավելված Գ-ում: Գործնականում գործընթացը կարող է գծային չլինել, իսկ գործողությունները՝ ոչ միշտ հերթական: Այնուամենայնիվ, գործընթացը նկարագրում է ընդհանուր հերթականությունը և տրամաբանական առաջընթացը/զարգացումը՝ սկսած խնդրի սահմանումից մինչև նախատեսված նպաստառուներին մաքրված հողատարածքների հանձնումը: Ականազերծման կառավարման գործընթացի չորս փուլերը (պլանավորում, նախապատրաստում, մաքրում և հետ-մաքրման գործողություններ) ներկայացված են ստորև:

4.1. Պլանավորում

Պլանավորումը տեղեկությունների հավաքագրում, գնահատում և մշակումն է, գործողությունների զարգացման նպատակահարմար ուղու ընտրությունն է և առաջադրանքի իրականացման մանրամասն մեթոդի հետագա ձևակերպումն է:

Ականազերծման գործողությունների պլանավորումը ժամանակին և ճշգրիտ տեղեկություններ է պահանջում ականների և ՊՊՄ-ների վտանգի ձևի, ծավալի և հետևանքների վերաբերյալ: Նման տեղեկությունների աղբյուրն են տեղանքի իմացությունը, գնահատման առաքելություններն ու հետազոտությունները, ինչպես նաև ականազերծման գործողությունների (այդ թվում նաև ԱՎԻ) ընթացիկ տեղական նախագծերն ու առաջադրանքները:

Ականազերծման գործողությունների ազգային ծրագիր մշակելու որոշումը սովորաբար տեղի է ունենում որպես հավաքագրված բավականաչափ տեղեկությունների արդյունք, որը ցուցադրում է նման կարիքը: Նման տեղեկությունների հավաքագրման գործընթացը պաշտոնական/նախատեսված և ոչ պաշտոնական գործողությունների համակցություն է և կարող է անվանվել որպես Ականազերծման գործողությունների ընդհանուր գնահատման (ԱԳԸԳ) գործընթաց: Սա տեղեկությունների հավաքագրման շարունակական գործընթաց է՝ համապատասխան ցանկացած մեթոդների միջոցով, որը վերաբերում է ականների կամ ՊՊՄ-ների պատահարներին, միջադեպերին և ականների ու ՊՊՄ-ների հետ կապված այլ տեղեկություններին: Գործընթացն արդյունավետորեն սկիզբ է առնում, երբ ստացվում է առաջին տեղեկությունը, որը վկայում է, որ երկրում խնդիր կա ականի կամ ՊՊՄ-ների հետ կապված, իսկ արդյունավետորեն ավարտվում է, երբ ականների և ՊՊՄ-ների մասին ողջ տեղեկությունները հայտնի է դառնում:

ԱԳԸԳ գործընթացը՝

ա. Հավաքագրում և վերլուծում է տեղեկությունները՝ գնահատելու ականապատված երկրում և առանձին համայնքներում ականների և ՊՊՄ-ների խնդրի ծավալն ու հետևանքները;

բ. Ապահովում է տեղեկություններ, որի հիման վրա որոշվելու է զեկուցված և/կամ կասկածելի ականների կամ ՊՊՄ-ների տարածումը, պայթուցիկ վտանգավոր նյութերի քանակն ու տեսակը հետազոտելու անհրաժեշտությունը;

գ. Հավաքագրում է ընդհանուր տեղեկություններ, ինչպիսիքն են՝ անվտանգության իրավիճակը, տեղանքը, հողի շերտի առանձնահատկությունները, կլիման, մայրուղիները, ենթակառուցվածքը և աջակցման տեղական հարմարությունները՝ նպաստելու ականազերծման ապագա գործողությունների և նախագծերի պլանավորմանը:

ԱԳԸԳ գործընթացի ժամանակ հավաքագրված տեղեկությունները պետք է ապահովեն խնդրի (եթե առկա է) չափերի և ծավալի աճող ցուցանիշը, դրա լուծման համար անհրաժեշտ ռեսուրսների գնահատումը, ազգային կարողություններն ու ներուժը՝ խնդրին անդրադառնալու համար, ինչպես նաև արտաքին աջակցության անհրաժեշտության գնահատումը՝ ներառելով ֆինանսական, մարդկային հմտությունների, նյութական և տեղեկատվական աջակցությունը: Հավաքագրված տեղեկությունները որոշ փուլում բավականաչափ կլինի՝ հնարավորություն տալով ազգային կառույցներին անհրաժեշտ աջակցության միջոցով սահմանելու գերակայություններ և մեկնարկել ականազերծման գործողությունների ազգային հետևողական ծրագրի և նախագծի մշակումը:

ԱԳԸԳ գործընթացի պահանջների վերաբերյալ ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 08.10-ում, իսկ ականազերծման գործողությունների համայնքային փոխգործակցության պլանավորման ուղեցույցը ներկայացված է ՀԱԳՄՉ 12.10-ում:

Ականազերծման գործողությունների հետագա հնարավոր ծրագրերի կատարյալ պլանավորման գործընթացը պետք է սիկլը առնի երկրի իրավիճակի պաշտոնական գնահատումից¹: Այդ գնահատումը մեծապես հիմնված կլինի առկա տեղեկությունների վրա, որոնք տրամադրվել են նախկինում անհամատեղելի խմբակցությունների կողմից, ինչպես նաև ականապատված երկրին կամ տարածաշրջանին լավատեղյակ գործակալությունների և կազմակերպությունների կողմից: Եթե հայցվում է ՄԱԿ-ի աջակցությունը, ապա բազմաոլորտային գնահատման խումբ կարող է գործուղվել այդ երկիր՝ հաստատելու և թարմացնելու առկա տեղեկությունները և սեփական փորձից էլնելով՝ պարզելու ականների և ՊՊՄ-ների իրավիճակի ծավալն ու հետևանքները: Երկրի գնահատումը պետք է պարզաբանի, պահանջվում է արդյոք ականազերծման գործողությունների ազգային ծրագիրը, և արդյոք հնարավոր է նման ծրագիրը: Ընթացիկ աշխատանքները պետք է ամբողջապես ճանաչվեն, այդ թվում նաև ականազերծման տեղական համայնքային նախագծերը:

4.2. Նախապատրաստում

Նախապատրաստումն ընդգրկում է բոլոր այն ակտիվացնող գործողությունները, որոնք նպաստում են մաքրման պահանջների պարզաբանմանը և ականազերծման կազմակերպությունների և դրանց ստորաբաժանումների՝ մաքրման առաջադրանք իրագործելու կարողության զարգացմանը: Սա ներառում է ականազերծման կազմակերպությունների ընտրությունն ու հավատարմագրումը, ինչպես դա նկարագրված է ՀԱԳՄՉ 07.30-ում:

Ազգային մակարդակում նախապատրաստումը պետք է նաև ներառի՝

- ա. Սարքավորումների նախապատրաստում;
- բ. Տուժածների մասին զեկուցելու մեթոդների սահմանում;
- գ. Համայնքային կամավորների ցանցի ստեղծում կամ համայնքային կամավորների առկա ցանցերի հետ կապի հաստատում/միավորում;
- դ. Համակարգման գործողություններ;
- ե. Այլ ոլորտների հետ կապի հաստատում;
- ե. ԱԳԸԳ գործընթացի կառավարում:

1. Սա նույն բանը չէ, ինչ ԱԳԸԳ-ն է, սակայն դրա մի մասն է:

4.2.1. Տեխնիկական հետազոտություն

Տեխնիկական հետազոտությունը հայտնի կամ կասկածելի վտանգավոր գոտիների մանրամասն տեղագրական և տեխնիկական հետաքննությունն է, որոնք պարզվել են պլանավորման փուլի ընթացքում: Նման գոտիները կարող էին պարզվել նաև ԱԳԸԳ գործընթացի վաղ շրջանում, որի մասն է կազմում տեխնիկական հետազոտությունը: Տեխնիկական հետազոտման առաջնային նպատակն է հավաքագրել բավականաչափ տեղեկություններ՝ հնարավոր դարձնելով մաքրման պահանջի առավել հստակ սահմանումը, ներառելով մաքրման ենթակա գոտիները, մաքրման խորություն, տեղի հողաշերտի առանձնահատկությունները և այլ տեղագրական ու տեխնիկական տեղեկություններ: Տեխնիկական հետազոտումը կարող է ներառել նաև գոտու կրճատում՝ մի գործընթաց, որի շնորհիվ այն գոտին, որը նախապես որոշվել էր որպես ականապատված, կրճատվում է՝ դառնալով ավելի փոքր գոտի, վտանգավոր գոտու տարածության վերաբերյալ ավելի հավաստի տվյալների հավաքագրման արդյունքում:

Երբեմն տեխնիկական հետազոտությունը հանդես կգա որպես մաքրման նախագծի առաջին փուլ, իսկ ականների և ՊՊՄ-ների վտանգների մասին մանրամասն տեխնիկական պատկերացումը/ըմբռնումը կզարգանա մաքրման առաջընթացին զուգահեռ: Այս իրավիճակը հաճախ տեղի է ունենում մարդասիրական միջամտության ժամանակ, օրինակ՝ արագացված հետազոտություն և մայրուղիների մաքրում, որոնք անհրաժեշտ են մարդասիրական օգնության առաքման համար կամ փախստականների և ներքին տեղահանված մարդկանց (ՆՏՄ) տեղաշարժին աջակցելու համար: Տեխնիկական հետազոտությունների պահանջների ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 08.20-ում:

4.2.2. Մաքրման պահանջ

Մարդասիրական ականագերծման թիրախային նպատակն է քուրք ականների և ՊՊՄ-ների վտանգների հայտնաբերումը և հեռացումը կամ ոչնչացումը՝ հատկորոշված գոտում և հատկորոշված խորության վրա: Մաքրման ենթակա գոտին և մաքրման խորությունը պետք է հատկորոշվեն ԱԳԱՄ-ի կողմից և համաձայնեցված լինեն ականագերծման կազմակերպության հետ, սակայն այն պետք է նաև բավարարի համայնքի կարիքները: Մաքրման պահանջը պետք է իրագործելի և հնարավոր/մատչելի լինի, ինչպես նաև համահունչ պետք է լինի մաքրման այն պահանջներին, որոնք կիրառվում են նմանատիպ դասերի և օգտագործման նպատակների հողակտորների նկատմամբ:

Ականագերծման գործողությունների նոր ծրագրի վաղ շրջանում կարող են այնպիսի հանգամանքներ ձևավորվել, երբ ականագերծման կազմակերպությանը մանդատ է տրվում սահմանելու մաքրման իր սեփական առաջադրանքները՝ դոնորի և/կամ ԱԳԱՄ-ի կողմից տրրամադրված ընդհանուր գերակայությունների հիման վրա: Նման հանգամանքներում ականագերծող կազմակերպությունը պետք է նախքան մաքրման աշխատանքները պաշտոնապես արձանագրի յուրաքանչյուր նախագծով նախատեսված մաքրման գոտին և խորությունը: Մաքրման պահանջների սահմանման ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 09.10-ում:

4.2.3. Ֆինանսավորում (ռեսուրսների կենտրոնացում)

Ականագերծման ծրագրերի ֆինանսավորումը հատկացվում է տարբեր աղբյուրներից: Ֆինանսավորումը կարող է հատկացվել ականապատված երկրի կառավարության կողմից, դոնոր երկրների կառավարությունների, ՄԱԿ-ի կամ միջազգային այլ կազմակերպությունների կողմից կամ էլ որոշ դեպքերում բարերարների և ժողովրդասերների կողմից: Ականագերծման ՀԿ-ները կարող են գումար հայթայթել անմիջապես հասարակությունից և մասնավոր աղբյուրներից կամ էլ հանրային հանգանակություններից: Գումարը կարող է պահվել տրաստային հիմնադրամներում կամ վերահսկվող հաշիվների այլ տեսակի միջոցով: Անկախ ֆինանսավորման աղբյուրից կարևոր է, որ գումարը համապատասխանի ականագերծման իրական ծախսերին, և որ ֆինանսավորողը երկարաժամկետ պարտավորություն ստանձնի: Դա հատկապես կարևոր է խոշոր նախագծերի համար, որոնք ականագերծման կազմակերպությունից պահանջում են խոշոր ներդրումներ կատարել անձնակազմի, թանկարժեք նոր սարքավորումների, օրինակ՝ վերգետնյա մեխանիկական մշակման համակարգերի, և մասնագիտական կարողությունների ուղղությամբ, օրինակ՝ ԱՇՇ-ների վերապատրաստում:

4.2.4. Պայմանագրի պատրաստում

Նախաձեռնվող աշխատանքների սահմանումը կատարյալ դեպքում պետք է պայմանագրի, առաջադրանքի հանձնարարման կամ պաշտոնական նմանատիպ համաձայնության այլ ձև ունենա: Պայմանագրի կամ առաջադրանքի հանձնարարման պատրաստումը ականապատված երկրի ազգային իշխանություններին դոնոր գործակալության հետ միասին հնարավորություն է տալիս մանրամասնորեն հատկորոշելու մաքրման պահանջը: Պայմանագիրը պետք է մանրամասներ պահանջի այն ռիսկի և որակի կառավարման գործընթացների վերաբերյալ, որոնք որդեգրվելու են մաքրման աշխատանքների ընթացքում: Այն պետք է ուրվագծի նաև զեկուցման պահանջները, ինչպես նաև ակնկալվող առաջընթացը և ֆինանսական կատարողականները:

Մաքրման աշխատանքների պայմանագրերի ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 07.20-ում:

4.2.5. Վերապատրաստում

Ականագերծման ծրագրերը պահանջում են լավ որակավորում ունեցող ղեկավարներ և լավ վերապատրաստված ականագերծողներ: Չնայած նրան, որ ազգային բարձրաստիճան ղեկավարների և տեխնիկական խորհրդատուների համար որոշ կենտրոնացված վերապատրաստումը կարող է նպատակահարմար լինել, այնուամենայնիվ վերապատրաստման մեծ մասը պետք է իրականացվի ականապատված երկրում՝ ոչ միայն մշակութային և լեզվաբանական նկատառումներից ելնելով, այլև ականների և ՊՊՄ-ների վտանգի մանրամասների հասանելիության պատճառով:

4.2.6. Տեղեկություններ

Ականագերծման ծրագրերի արդյունավետ կառավարումը պահանջում է ճշգրիտ, պատշաճ և ժամանակին տրամադրվող տեղեկություններ: Տեղեկությունների բազմաթիվ աղբյուրներ կան տեղական, ազգային և միջազգային մակարդակներում, որոնք կիրառելի են ծրագրեր նախագծողների, կառավարիչների և դոնորական հանրության կարիքների համար: Հաճախ նման տեղեկությունների հասանելիությունը սահմանափակ է լինում, իսկ վճռական տվյալների ճշգրտությունը հնարավոր չէ հաստատել:

ԱԳԱՄ-ը պետք է ամեն ջանք գործադրի՝ ականներից տուժած համայնքներին ամբողջապես ներգրավելու ընդհանուր տեղեկատվական հոսքի և կառավարման գործընթացի մեջ: Դա կարելի է անել համայնքային զեկուցման մեխանիզմների ստեղծման միջոցով և ականագերծման գործողությունների ազգային գործընթացի ողջ ընթացքում համայնքային ներգրավվածության նկատմամբ պարտավորության միջոցով: Համայնքային մասնակցությունը պետք է հավասարակշռված լինի՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են տարիքը, մշակույթը և գենդերային ուղղորդման անհրաժեշտությունը:

ԱԳԱՄ-ը և ականազերծման կազմակերպությունները պետք է ստեղծեն և պահպանեն տեղեկատվական կառավարման արդյունավետ համակարգեր: ՄԱԿ-ի Ականազերծման գործողությունների տեղեկատվական կառավարման IMSMA համակարգը մշակվել է՝ հնարավորություն տալու հաստատությանը դաշտային և գլխամասային գրասենյակների մակարդակներում ժամանակին հավաքագրել, համադրել և բաշխել համապատասխան տեղեկություններ: ՀԳՏԿՀ-ն հասանելի է ականազերծման գործողությունների բոլոր ծրագրերին:

Տեղեկությունների կարիքների, տեղեկությունների կառավարման և ականազերծման գործողություններում տեղեկատվական համակարգերի կիրառման վերաբերյալ ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 05.10-ում:

4.2.7. Սարքավորումներ և գործիքներ

ԱԳԱՄ-ի պարտավորությունն է ամենաարդյունավետ կերպով հատկացնել ճիշտ գործիքները՝ ապահովելու գերակայությունների հասանելիությունը: Դա կարելի է անել՝ ազգային մակարդակում պահպանելով ռեզերվային կարողություն, որը կարելի է հատկացնել/բաշխել ըստ անհրաժեշտության՝ կախված մաքրման իրավիճակից:

Ականազերծման ծրագրերն ավանդաբար վստահել են ոչ ավտոմատացված փորձառնությանը, ընթացակարգերին և վարժանքներին: Շատ իրավիճակներում ոչ ավտոմատացված մեթոդները (օգտագործելով մետաղական ականորսիչներ և ձեռքի գործիքներ) կլինեն ամենանպատակահարմար և արդյունավետ ձևը՝ ականներ և ՊՊՄ-ներ հայտնաբերելու, հեռացնելու կամ ոչնչացնելու համար: Մակայն որոշ ծրագրերում սարքավորումների ավելի ընդարձակ կիրառումը կարող է նպաստել մաքրման աշխատանքների (և ականազերծման այլ տարրերի) ավելի ապահով, արդյունավետ և արտադրողական կերպով իրագործմանը:

Ականազերծման տեխնոլոգիաները կարելի է խմբավորել ըստ երեք հիմնական դասերի՝ համաձայն իրենց տեխնիկական հասունությանը և առկայությանը.

- ա. Այնպիսի սարքավորումներ, որոնք լիարժեք մշակվել, փորձարկվել և գնահատվել են (ՓԳ) և կարող են ներմուծվել ականազերծման ծրագրեր առանց որևէ լուրջ ձևափոխման կամ փոփոխման;
- բ. Այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք ըստ փորձարկման արդյունանների կարող են աշխատել, սակայն դեռ հետագա մշակում և պաշտոնական ՓԳ են պահանջում;
- գ. Այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կարող են կիրառվել ականազերծման մեջ, սակայն դեռ պետք է կատարելագործվեն և դեռևս պաշտոնապես չեն ցուցադրվել:

Ականազերծող կազմակերպությունները սարքավորումների գնման իրենց գործընթացը պետք է իրագործեն առաջին դասի ուղղությամբ, սակայն հնարավորության դեպքում պետք է աջակցեն երկրորդ դասի տեխնոլոգիաների մշակմանն ու դաշտային փորձարկմանը: Որոշ նոր տեխնոլոգիաներ հնարավորություն ունեն մեծածավալ բարելավում առաջացնելու անվտանգության և ծախսերի արդյունավետության գծով, դոմորները պետք է աջակցություն ապահովեն և հորդորեն ականազերծման այդ կազմակերպություններին, որոնք դաշտային պայմաններում կիրառում են այդ նոր տեխնոլոգիաները և իրականացնում դրանց ՓԳ-ն:

Ականազերծման ոլորտում սարքավորումների կիրառման ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 03.10-ում:

4.2.8. Հավատարմագրում

Հավատարմագրման գործընթացը բաղկացած է երկու մասից: Կազմակերպության հավատարմագրումը մի ընթացակարգ է, որի միջոցով ականագերծման կազմակերպությունը պաշտոնական ճանաչում է ձեռք բերում որպես իրավասու և ունակ արդյունավետորեն և արտադրողականորեն նախագծելու և կառավարելու համար: Գործառնական հավատարմագրումը մի ընթացակարգ է, որի միջոցով ականագերծման կազմակերպությունը պաշտոնական ճանաչում է ձեռք բերում որպես իրավասու և ունակ ականագերծման գործողություններ իրագործելու համար: Հավատարմագրում կշնորհվի կազմակերպության գլխամասային գրասենյակին (երկրի տարածքում գտնվող գրասենյակին) ստույգ ժամանակահատվածով՝ սովորաբար երկուսից երեք տարի ժամկետով: Գործառնական հավատարմագրումը կիրառելի է այն կարողությունների նկատմամբ, որոնք անհրաժեշտ են ականագերծման առաձին գործողության իրագործման համար, օրինակ՝ հետազոտում, ձեռքի աշխատանքով մաքրում կամ ԱՀՇ-ների կիրառում:

Ականագերծման կազմակերպությունների հավատարմագրման ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 07.30-ում, իսկ ԱՎԻ կազմակերպությունների հավատարմագրման ուղեցույցը՝ ՀԱԳՄՉ 07.31-ում:

4.3. Մաքրում

Մաքրումը ականների և ՊՊՄ-ների հայտնաբերում, հեռացում կամ ոչնչացումն է, իսկ պայթուցիկ զինամթերքից ազատման գործողություններում (ԱՊԶ) կարող է ներառվել նաև մոտենալու հնարավորություն, ախտորոշում, ապահով համարելու որոշում, վերջնական ոչնչացում և (ըստ նպատակահարմարության) պաշտպանիչ աշխատանքներ:

Մաքրման պահանջներ սահմանելու ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 09.10-ում:

4.3.1. Մաքրման ընթացակարգեր

Արդյունավետ և ապահով գործառնական ընթացակարգերի կարիքն էական է: Գործառնական որոշ ընթացակարգեր հիմնված են միջազգային նորմերի և «լավագույն փորձի» վրա, ինչպիսիքն են ականների և ՊՊՄ-ների ոչնչացումը հենց տեղում, անվտանգության հեռավորությունները և աշխատանք պայթուցիկների հետ: Դրանցից որոշները հիմնված են ականների և ՊՊՄ-ների տեղական վտանգների և տեղանքի պայմանների վրա, մյուսներն արտացոլում են սարքավորումների առանձնահատկություններն ու գործողությունը, իսկ մեկ այլ խումբ արտացոլում է տեղական նախապատվությունները, օրինակ՝ բիզնեսական և արտապեղման համար ընդունած դիրքը:

Մշտական գործառնական ընթացակարգեր (ԳՍԸ) պետք է մշակվեն գործառնական բոլոր ընթացակարգերի, փորձառնությունների և վարժանքների համար: ԳՍԸ-ները հրահանգներ են, որոնք սահմանում են գործառնական առաջադրանքի կամ գործողության իրագործման նախաընտրելի մեթոդը: Դրանց խնդիրն է կազմակերպության ներսում սահմանել միատարրության, հետևողականության և համընդհանրության ճանաչելի և չափման ենթակա աստիճաններ՝ նպատակ ունենալով բարելավելու գործառնական արդյունավետությունն ու անվտանգությունը: ԳՍԸ-ները պետք է արտացոլեն տեղական պահանջներն ու հանգամանքները:

4.3.2. Ազատում պայթուցիկ զինամթերքից (ԱՊԶ)

ԱՊԶ-ն ներառում է այն ՊՊՄ-ների ոչնչացումը, որոնց շարքում չկան ականներ (սահմանումը տես Հավելված Բ-ում): ՊՊՄ-ները կարող են վնասագերծվել որպես ականագերծման պայմանագրի մի մաս կամ կարող են վնասագերծվել ԱՊԶ-ի գծով մասնագիտացած կապալառուի կողմից առանձին միջոցառումների շրջանակում, կամ էլ երկու իրավիճակները կարող են գուզահեռ տեղի ունենալ: ՀԱԳՄՉ-երի նպատակներից դուրս գալով՝ երկու գործողություններն էլ սահմանվում են որպես ԱՊԶ գործառնություններ:

Ականազերծման ժամանակ հայտնաբերված ՊՊՄ-ների մեծամասնությունը զինամթերքի փոքր պարագաներ են, ինչպիսիք են ենթառագմամթերք, նռնակներ և ականանետային ռազմամթերք: Սակայն ՊՊՄ-ները ներառում են նաև ավելի խոշոր իրեր, օրինակ՝ հրետանային ռազմամթերք, ուղղորդվող արկեր, օդից զցվող արկեր, խմբակային արկեր և այլն: ՊՊՄ-ների չափերի լայն տեսականին և բարդությունը պահանջում են, որպեսզի ԱՊԶ-ի կառավարմանը հատուկ ուշադրություն դարձվի:

ԱՊԶ-ի կառավարման ուղեցույցը որպես ականազերծման ծրագրի մի մաս բերված է ՀԱԳՄՉ 09.30-ում, որն անդրադառնում է ընդհանուր սկզբունքներին և կառավարման պարտականություններին: Այն չի ապահովում տեխնիկական հատուկ ուղեցույց առանձնահատուկ պայթուցիկ զինամթերքից ազատման վերաբերյալ (ՊԶ, EO):

4.3.3. Հատուկ կարողություններ

4.3.3.1. Ականներ հայտնաբերող շների (ԱՀՇ) կիրառում

Վերջին տարիներին թաղված ականների և զինամթերքի գոյորշացումների հայտնաբերման նպատակով ԱՀՇ-ների կիրառումն աստիճանաբար տարածված է դարձել, և ներկայումս որոշ ծրագրեր մեծ քանակով շներ են գործածում: Սակայն հայտնաբերող շներին վերագրվող գործողության մեջ շեղումներ/տարբերություններ են եղել: Որոշ օգտագործողներ մաքրման աստիճանի աճ են հայտարարել հինգ և ավելի գործոններին համաձայն, մինչդեռ այլ օգտագործողներ, նույնիսկ նույն գոտում գործող, կասկած են արտահայտել ԱՀՇ-ներով իրենց ծրագրերի արդյունավետության և վստահելիության վերաբերյալ: Նմանատիպ շեղումներ տեղի են ունեցել նաև շների փորձարկման ժամանակ:

ՀԱԳՄՉ 09.40-ն ուղղություն է տալիս ԱՀՇ-ներ կիրառող ԱԳԱՄ-ին և ականազերծման գործակալություններին:

4.3.3.2. Մեխանիկական ականազերծում

Մեխանիկական սարքերի արտադրությունն աստիճանաբար ավելացել է, որոնց խնդիրն է պայթեցնել, ոչնչացնել կամ էլ առանձնացնել ականներ: Որոշ դեպքերում մեխանիկական սարքերը կարող են գործածվել ՊՊՄ-ների որոշակի տեսակների դեմ, օրինակ՝ ենթառագմամթերքի դեմ: Վաղ շրջանի մեքենաները հաճախ եղել են ծանրաշարժ, ոչ վստահելի և ցածր հզորությամբ, իսկ կատարված մաքրման աշխատանքները չեն բավարարել ՄԱԿ-ի նվազագույն պահանջները, եթե դրանք հանդես չեն եկել որպես ձեռքի և մեխանիկական համատեղ աշխատանքի ընթացակարգի մի մաս: Ներկայումս այն գոտիներում, որտեղ նման մեքենաներ են կիրառվում, դրանց գործողությունները սովորաբար նպատակաուղղված են բուսականության և trip-wire-ով գործարկվող ակկանների հեռացման միջոցով ռիսկի նվազեցմանը և ականների որոշ աստիճանի ոչնչացմանը որպես գոտու կրճատման աշխատանքների մի մաս:

Նոր և դեռ չփորձարկված մեխանիկական համակարգերի ներմուծման ընթացակարգերը մշակվել են 1998թ-ին՝ Ականազերծման գործողությունների տեխնոլոգիաների վերաբերյալ Կարլստուհեի միջազգային համաժողովում: Համաժողովի ժամանակ առաջարկվեց, որ բոլոր մեխանիկական համակարգերը պետք է պաշտոնապես գնահատվեն՝ հաստատելու, որ դրանք ապահով են, արդյունավետ և վստահելի: Այս առաջարկությունը հետագայում ընդունվեց ՄԱԿ-ի կողմից՝ ՄԱԿ-ի աջակցությամբ ականազերծման գործողությունների բոլոր ծրագրերի համար:

Կատարյալ տարբերակում փորձարկումները (և փորձարկումների տվյալների հետագա գնահատումը) պետք է իրականացվեն, նախքան ականազերծման գործողությունների ծրագրերում կներմուծվեն մեխանիկական համակարգերը: Սակայն երբեմն կարող է անհրաժեշտ լինել, որ գնահատումն իրականացվի ծրագրի մեկնարկից հետո:

4.3.4. Որակի ապահովում (ՈԱ)

“Մաքրման” սահմանումն ընդգրկում է կառավարման գործընթացների և գործառնական ընթացակարգերի ստեղծումն ու մոնիտորինգը նախքան մաքրման գործընթացը և դրանից հետո: Ներքին ՈԱ կիրականացվի հենց ականագերծման կազմակերպությունների կողմից, սակայն մոնիտորինգի արտաքին մարմինների կողմից իրականացվող արտաքին ստուգումներ նույնպես պետք է տեղի ունենան:

ՈԱ-ի նպատակն է հաստատելու, որ ականագերծման կառավարման փորձառությունները և գործառնական ընթացակարգերը համապատասխան են և ապահով, արդյունավետ ու արտադրողական կերպով կբավարարեն նշված պահանջը: Մոնիտորինգը պետք է ներառի նաև կառուցվածքային քննարկումներ ղեկավարության և ականագերծողների հետ, ինչպես նաև ԳՍԸ-ների, զեկույցների և արձանագրությունների պաշտոնական ստուգումներ:

ԱԳԱՄ-ը կարող է որևէ գործակալ նշանակել՝ ականագերծման կազմակերպության և դրա ստորաբաժանումների մոնիտորինգը և ստուգումներն իրականացնելու նպատակով՝ պայմանագրի կամ պաշտոնական համաձայնագրի համաձայնեցված դրույթներին համապատասխան իրագործվող իր իրավասության և պատասխանատվության ներքո: ԱԳԱՄ-ի կողմից այս նպատակով նշանակված ցանկացած գործակալից կպահանջվի ունենալ բոլոր այն հարմարությունները, անձնակազմը, կառավարման համակարգերը և ԳՍԸ-ները, որոնք անհրաժեշտ են համարժեք մոնիտորինգի համար:

ՀԱԳՄՉ 07.40-ն ապահովում է մոնիտորինգի պահանջների և մանրամասն պարտավորությունների ուղեցույցը:

4.3.5. Համայնքային կապ

Համայնքային կապը մաքրման գործընթացի անքակտելի մասն է կազմում և գլխավոր դեր է կատարում՝

- ա. Մաքրման պահանջները հաստատելիս;
- բ. Վերջնական ապրանքի (այսինքն՝ մաքրված հողերի) որակի նկատմամբ համայնքի բարձրաստիճան վստահությունն ապահովելիս:

Համայնքային կապի գործառույթի ընդհանուր պահանջները կարող են իրագործվել ականագերծման թիմի մասնագիտացած անդամների կողմից, կամ էլ այդ կարողությունը կարելի է ենթապայմանագրի միջոցով հանձնարարել մասնագիտացած ԱՎԻ գործակալությանը:

ԱԳԱՄ-ն իր գործակալության համայնքային կապի կարողությունը պետք է ընդգրկի մոնիտորինգի իր ընդհանուր նախագծի մեջ: Որոշ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել ստանձնելու կապող օղակի դերը՝ ականագերծման կազմակերպությունների և ԱՎԻ ծրագրերի միջև կապեր հաստատելու նպատակով՝ ապահովելու համայնքային կապի համարժեք գործառույթի ստեղծումն ու պահպանումը:

4.3.6. Անվտանգություն և աշխատանքի հիզդեմ (ԱԱՀ)

Ականազերծման ծրագրերի ղեկավարներից պահանջվում է ստեղծել անվտանգ աշխատանքային միջավայր՝ ապահովելով արդյունավետ կառավարում և վերահսկողություն, մշակելով ռիսկի նվազեցմանը նպաստող աշխատանքային փորձառություններ, ընտրելով ըստ էության ապահով դիզայն ունեցող սարքավորումներ, ապահովելով համապատասխան ուսուցում և հասանելի դարձնելով արդյունավետ անձնական պաշտպանիչ սարքավորումները (ԱՊՍ): Կախված գործառնական միջավայրի և ականազերծման գործողությունների լայն շրջանակից հնարավոր չէ ապահովել մանրամասների ճշգրիտ և լիարժեք մի փաթեթ, որոնք կիրառելի են բոլոր իրավիճակներում: Ականազերծման կազմակերպությունները պետք է մշակեն և պահպանեն կառավարման ընթացակարգեր և գործընթացներ, որոնք հնարավոր կդարձնեն ԱԱՀ ռիսկերի հայտնաբերումը, գնահատումն ու նվազեցումը համակարգված և ժամանակին ականազերծման յուրաքանչյուր առաջադրանքի և ականազերծման յուրաքանչյուր աշխատավայրի համար:

Ականազերծման գործողություններում կիրառվող ԱԱՀ կառավարման համակարգերի մշակման և իրագործման ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 10.10-ում: Ականազերծման աշխատավայրի անվտանգության վերաբերյալ ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 10.20-ում: Անձնական պաշտպանիչ սարքավորումների (ԱՊՍ) վերաբերյալ ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 10.30-ում: Ականազերծման գործողությունների ժամանակ բժշկական օգնության վերաբերյալ ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 10.40-ում: Պայթուցիկների պահեստավորման, փոխադրման և կազմակերպման վերաբերյալ ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 10.50-ում, իսկ ականազերծման միջադեպերի մասին զեկուցման և դրանց հետաքննության վերաբերյալ ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 10.60-ում:

4.4. Մաքրմանը հաջորդող աշխատանքներ

Մաքրված հողերի ստուգումը նպատակ է հետապնդում վստահություն ներշնչելու, որ մաքրման պահանջները բավարարվել են, և որպես այդիսին մաքրման ընդհանուր գործընթացի էական մասն է կազմում: ՀԱԳՄՉ 09.20-ը նմուշի միջոցով մաքրված հողի որակը ստուգելու նպատակով կառավարման համակարգի իրականացման վերաբերյալ ուղեցույց է ապահովում: Այս ընթացակարգի կարևոր կողմն է պարզել մնացորդային ռիսկի պատասխանատվությունը և ապահովել տեղի համայնքի լիարժեք իրազեկումը:

Նախքան մաքրված հողերի հանձնումը տարածքը պետք է հետազոտվի ու նշագրվի, և պետք է պատրաստվեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում նաև հանձնման պաշտոնական տեղեկանքը: ՀԱԳՄՉ 08.30-ը մաքրմանը հաջորդող հանձնման պահանջների և կառավարման պարտավորությունների վերաբերյալ ուղեցույց է ապահովում:

Հնարավորության դեպում ականազերծող կազմակերպությունները պաշտոնական հետ-նախագծային վերանայում (ՀՆՎ) պետք է իրականացնեն՝ ամրագրելու գործողության պլանավորման, նախապատրաստման և մաքրման փուլերի ընթացքում քաղած դասերը: ՀՆՎ-ն սարքավորումների, ընթացակարգերի, վերապատրաստման և աջակցման նպատակահարմարության վերաբերյալ զեկույց պետք է ընդգրկի, իսկ բոլոր պատահարների ու միջադեպերի զեկույցները պետք է հանդես գան որպես հավելվածներ: Պետք է պարզաբանվեն և ըստ գերակայությունների դասակարգվեն մտահոգիչ խնդիրները և դրանց լուծումներ պետք է առաջարկվեն: ՀՆՎ-ների պահանջները դոնորների և ազգային իշխանությունների կողմից պետք է ներառված լինեն մաքրման պայմանագրերում: ՀՆՎ-ները պետք է տրամադրվեն ականազերծման գործողությունների ազգային մարմիններին, ՄԱԿ-ին (UNMAS, UNDP և UNOPS) և դոնորներին կամ հովանավորներին: Եթե ՀՆՎ-ները տրամադրված սարքավորումների կամ սահմանված ընթացակարգերի սակավություն կամ թերություններ են մատնամշում, հատկապես անվտանգությանն առնչվող խնդիրներ, ապա դրանք կազմակերպությունների ավելի լայն շրջանակին պետք է բաշխվեն:

5. Որակի կառավարում (ՈԿ)

Ականագերծման գործողությունների արդյունավետ կառավարումը նպատակաուղղված է ապահով և արդյունավետ կերպով հողերի մաքրմանը: Դա իրագործվում է կառավարման համապատասխան գործընթացների մշակմամբ և կիրառմամբ, ղեկավարների և ականագերծողների հմտությունների ստեղծմամբ և շարունակական բերլավմամբ, ականների և ՊՊՄ-ների վտանգների վերաբերյալ ճշգրիտ և ժամանակին տեղեկությունների ձեռքբերմամբ, ապահով և արդյունավետ գործառնական ընթացակարգերի կիրառմամբ և համապատասխան ու արտադրողական սարքավորումների շահագործմամբ: Բայց կառավարումը չի նշանակում միայն ընթացիկ առաջադրանքների պլանավորում և վերահսկում, այն նաև ընթացիկ փորձառնությունների և ընթացակարգերի վերանայումն է՝ բարելավելու ապահովությունը, արդյունավետությունն ու արտադրողականությունը:

Այն գործընթացներն ու ընթացակարգերը, որոնք նպատակաուղղված են կազմակերպության կառավարման համակարգի և գործառնական փորձառնությունների շարունակական բարելավման ձեռքբերմանը, ընդհանրապես կոչվում են ՈԿ: Կազմակերպության համար ՈԿ ցուցադրման մեթոդներից մեկն է դառնալ համապատասխան ISO 9001:2000-ին:

Գոյություն ունեն ծավալուն ընդհանուր տեղեկություններ և վերապատրաստման նյութեր, որոնք հասանելի են ազգային ՀԱԿ-ին և ականագերծման կազմակերպություններին, որոնք որոշում են ընդունում որդեգրել ISO 9001:2000-ի մոտեցումը: ISO 9001:2000-ի մոտեցման ամփոփագիրը բերված է Հավելված Դ-ում: Իր էությամբ ISO 9001:2000-ը որակի համակարգերի միջազգային չափորոշիչների մի շարք է: Դրանք հատկորոշում են կառավարման համակարգի մշակման պահանջներն ու առաջարկությունները, որի նպատակն է ապահովել, որ տրամադրված “ապրանքները” կամ “ծառայությունները” բավարարում են համաձայնեցված կարիքները: Ականագերծման դեպքում մաքրված հողերը հանդես են գալիս որպես ապրանք, որն ապահով է իր նախատեսված օգտագործման համար:

Ականագերծող կազմակերպությունների ղեկավարներին հորդորվում է ստուգել, թե ինչպես են կիրառվում ականագերծման գործողությունների մեջ ՈԿ սկզբունքները: Կատարելով դա՝ նրանք հատուկ ուշադրություն պետք է դարձնեն երկու հարցի: Առաջին՝ ինչպես պետք է պլանավորվեն, իրագործվեն, մոնիտորինգի ենթարկվեն և վերանայվեն հատուկ գործընթացները (օրինակ՝ ականագերծումը): Եվ երկրորդ՝ նրանք պետք է նշեն բոլոր ղեկավարների և ականագերծողների պարտականությունները՝ սահմանելու գործընթացի բարելավման հնարավորությունները և օտզվելու դրանց առիթից:

6. Պարտավորություններ

6.1. Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԱԿ-ը ընդհանուր պատասխանատվություն է կրում ապահովելու, որ բարենպաստ միջավայր հիմնդրվի ականագերծման գործողությունների ծրագրերի արդյունավետ կառավարման համար՝ շարունակաբար կատարելագործելով ՀԱԿՄՉ-ները՝ արտացոլելու ականագերծման գործողությունների լրամշակվող նորմերն ու փորձառնությունները և ընդգրկելով միջազգային կանոնակարգերի և պահանջների փոփոխությունները, ինչպիսիքն են Ստանդարտների միջազգային կազմակերպության (ISO) և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից մշակված փոփոխությունները: ՄԱԿԱԾ-ը Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարության կազմում այն գրասենյակն է, որը միջազգային հանրության առջև պատասխանատու է ՀԱԿՄՉ-երի մշակման և պահպանման համար, այդ թվում նաև սույն ուղեցույցի համար:

ՄԱԿ-ը կիրառում է ՀԱԳՄՉ-երը ակնազերծման գործողությունների իր ծրագրերում, գործողություններում և պայմանագրերում, եթե տեղի իրավիճակը չի խոչընդոտում դրանց արդյունավետ կիրառմանը: Նման հանգամանքներում, երբ ՀԱԳՄՉ-երից մեկը կամ մի քանիսը նպատակահարմար չեն, ապա ՄԱԿ-ն ապահովում է այլընտրանքային մանրամասներ, պահանջներ և ուղեցույց:

6.2. Ակնազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ-ը կամ դրա անունից գործող կազմակերպությունը պատասխանատու է ազգային և տեղական պայմանների ապահովման համար, որոնք հնարավոր են դարձնում ակնազերծման նախագծերի արդյունավետ կառավարումը: ԱԳԱՄ-ն ամբողջական պատասխանատվություն է կրում իր պետական սահմանների տարածքում ակնազերծման նախագծի բոլոր փուլերի համար, ներառյալ մաքրման պահանջների սահմանումը, ակնազերծման կազմակերպությունների հավատարմագրումը, ակնազերծման կազմակերպությունների մոնիտորինգը մաքրման աշխատանքների ընթացքում, մաքրմանը հաջորդող ստուգումները նախքան մաքրված հողերի համար ամբողջական պատասխանատվություն ստանձնումը:

ԱԳԱՄ-ը պատասխանատվություն է կրում ակնազերծման գործողությունների կառավարման համար ստեղծել և պահպանել ազգային կանոնակարգեր և ընթացակարգեր: Այդ գործընթացները պետք է համահունչ լինեն ՀԱԳՄՉ-ներին, ազգային և միջազգային այլ համապատասխան չափորոշիչներին, կանոնակարգերին և պահանջներին:

Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ-ը կամ որևէ այլ ճանաչված միջազգային կազմակերպություն կարող է անհրաժեշտ և տեղին համարել ստանձնելու ԱԳԱՄ-ի պարտականությունների մի մասը կամ դրանք ամբողջությամբ և իրականացնելու գործառույթների մի մասը կամ դրանք ամբողջությամբ:

6.3. Դոնորներ

Դոնոր գործակալությունները կառավարման գործընթացի մի մասն են կազմում և որպես այդպիսին պատասխանատվություն են կրում ապահովելու, որ իրենց կողմից ֆինանսավորվող նախագծերն արդյունավետորեն կառավարվեն և համապատասխանեն միջազգային չափորոշիչներին: Սա ընդգրկում է խստապահանջ ուշադրություն պայմանագրային փաստաթղթերի ձևակերպման նկատմամբ և այն փաստի ապահովումը, որ նման պայմանագրերի իրագործման համար ընտրված ակնազերծմող կազմակերպությունները բավարարեն հավատարմագրման չափանիշները: Դոնորները կամ նրանց գործակալները մասամբ պատասխանատու են նաև ապահովելու, որպեսզի կիրառվեն որակի կառավարման չափորոշիչներն ու ուղենիշները: Այս պատասխանատվությունն ու պարտավորությունը նույնսիկ ավելի մեծ է լինում, երբ ԱԳԱՄ-ը գտնվում է իր կազմավորման շրջանում և դեռ չի ունեցել փորձառություն ձեռք բերելու հնարավորություն:

6.4. Ակնազերծող կազմակերպություններ

Վերջ ի վերջո ակնազերծող կազմակերպությունից է պահանջվում, անկախ իր տեսակից, հիմնադրել կառավարման նպատակահարմար և արդյունավետ համակարգ, ցուցադրել դա ԱԳԱՄ-ին և կիրառել այն ակնազերծման նախագծի ողջ ընթացքում:

Եթե ԱԳԱՄ-ը գտնվում է իր կազմավորման շրջանում, ապա ակնազերծող կազմակերպությունը պատասխանատվություն է կրում նաև կազմավորման գործընթացին աջակցելու համար՝ ապահովելով խորհուրդներով և աջակցությամբ, ներառյալ ազգային չափորոշիչներին ձևակերպումը:

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրապարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

- a) ՀԱԳՄՉ 02.10՝ Ականազերծման գործողությունների ծրագրի հիմնադրման ուղեցույց;
- b) ՀԱԳՄՉ 03.10՝ Ականազերծման գործողությունների սարքավորումների գնման ուղեցույց;
- c) ՀԱԳՄՉ 04.10՝ Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ;
- d) ՀԱԳՄՉ 05.10՝ Տեղեկությունների կառավարում;
- e) ՀԱԳՄՉ 06.10՝ Վերապատրաստման կառավարում;
- f) ՀԱԳՄՉ 07.20՝ Ականազերծման գործողությունների պայմանագրերի մշակման և կառավարման ուղեցույց;
- g) ՀԱԳՄՉ 07.30՝ Ականազերծող կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրում;
- h) ՀԱԳՄՉ 07.31՝ Ականների վտանգի իրազեկմամբ զբաղվող կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրում;
- i) ՀԱՄՉ 07.40՝ Ականազերծող կազմակերպությունների մոնիտորինգ;
- j) ՀԱԳՄՉ 08.10՝ Ականազերծման գործողությունների ընդհանուր գնահատում;
- k) ՀԱԳՄՉ 08.20՝ Տեխնիկական հետազոտություն;
- l) ՀԱԳՄՉ 08.30՝ Ականազերծումից հետո ձևակերպվող փաստաթղթեր;
- m) ՀԱԳՄՉ 09.10՝ Վնասազերծման պահանջներ;
- n) ՀԱԳՄՉ 09.20՝ Վնասազերծված տարածքի հետազոտություն. նմուշների փորձարկման ընթացակարգերի օգտագործման ուղեցույց;
- o) ՀԱԳՄՉ 09.30՝ Պայթուցիկ նյութերի ոչնչացում;
- p) ՀԱԳՄՉ 09.40՝ Ականներ հայտնաբերող շների օգտագործման ուղեցույց;
- q) ՀԱԳՄՉ 09.50՝ Մեխանիկական ականազերծում;
- r) ՀԱԳՄՉ 10.10՝ ԱևԱՀ՝ ընդհանուր պահանջներ;

- s) ՀԱԳՄՉ 10.20՝ ԱևԱՀ՝ ականագերծման վայրի անվտանգություն;
- t) ՀԱԳՄՉ 10.30՝ ԱևԱՀ՝ անձնական պաշտպանության սարքավորումներ (ԱՊՍ, PPE);
- u) ՀԱԳՄՉ 10.40՝ ԱևԱՀ՝ բժշկական օգնություն ականագերծման գործողությունների ժամանակ;
- v) ՀԱԳՄՉ 10.50՝ ԱևԱՀ՝ պայթուցիկների պահեստավորում, փոխադրում և պահպանում;
- w) ՀԱԳՄՉ 10.60՝ ԱևԱՀ՝ ականագերծման պատահարների զեկուցում և դրանց հետաքննություն;
- x) ՀԱԳՄՉ 12.10՝ ԱՎԻ ծրագրերի և նախագծերի պլանավորում;
- y) ISO 9001:2000 (E);
- z) ISO 14000:2004՝ Բնապահպանության կառավարման համակարգեր՝ պահանջներ և կիրառման ուղեցույց;
- aa) ՄԱԿ՝ ականագերծման գործողությունների ծրագրերի զենդերային ուղենիշներ:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականագերծման Ժնևի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմիններ ու կազմակերպություններ պետք է նախքան ականագերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

Հավելված Բ **(Տեղեկատվական)** **Տերմիններ, սահմանումներ և հասկացումներ**

B.1.

Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊԶ)

Պայթուցիկ զինամթերք, որոնք չեն օգտագործվել զինված հակամարտության ընթացքում, որոնք լքվել կամ գցվել են զինված հակամարտության մասնակցի կողմից և որոնք այլևս չեն գտնվում դրանք լքած կամ գցած կողմի վերահսկողության տակ: Լքված պայթուցիկ զինամթերքը կարող են կամ չեն կարող լինել լիցքավորված, համակցված, հրահանները քաշված կամ այլապես նախապատրաստված օգտագործման համար: (ՌՍԶ արձանագրություն V)

B.2.

Ականազերծող կազմակերպություն

Վերաբերում է ցանկացած այն կազմակերպությանը (պետական, հասարակական, զինվորական կամ առևտրային մարմին), որը պատասխանատու է ականազերծման նախագծերի կամ առաջադրանքների իրագործման համար: Ականազերծող կազմակերպությունը կարող է լինել հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ:

B.3.

Ականազերծող ստորաբաժանում

Ականազերծող կազմակերպության մի ստորաբաժանում, անկախ անվանումից, որը գործառնականորեն հավատարմագրված է իրագործելու մի կամ մի քանի նախատեսված ականազերծման գործողություն, օիրնակ՝ տեխնիկական հետազոտումներ, ձեռքի աշխատանքով մաքրում, պայթուցիկ նյութերի ոչնչացում կամ ԱՀՇ թիմերի գործածում:

B.4.

Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)

Չպայթեցված հրանոթներ (ԶՊԶ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊԶ): (ԿՈԶ արձանագրություն V):

B.5.

Գենդերային ուղղորդում

Որևէ պլանավորված գործողության վրա կանանց և տղամարդկանց ազդեցության գնահատում: Ականազերծման գործողությունների դեպքում գենդերային ուղղորդման ուշադրության կենտրոնում պետք է լինի, որ երկու սեռերի մտահոգություններն ու փորձը հաշվի առնվի ծրագրերի նախագծման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման ժամանակ:

B.6.

Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

Ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություն(ներ)ը, կազմակերպություն(ներ)ը կամ հաստատություն(ներ)ը, որը(որոնք) պատասխանատու են ականազերծման գործողությունների կարգավորման, կառավարման և համակարգման համար:

Նշում՝ Հիմնականում Ականազերծման գործողությունների կենտրոնը (ՀԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից:

Նշում՝ Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ-ը կամ որևէ այլ ճանաչված միջազգային կազմակերպություն կարող է անհրաժեշտ և տեղին համարել ստանձնելու ԱԳԱՄ-ի պարտականությունների մի մասը կամ ամբողջությամբ և իրականացնելու գործառնությունների մի մասը կամ ամբողջությամբ:

B.7.

Որակ

Այն աստիճանը, որով սահմանված հատկանիշները բավարարում են առաջադրվող պահանջները [ISO 9000:2000]

B.8.

Որակի ապահովում (ՈԱ)

Որակի կառավարման մի մաս, որը վերաբերում է որակի պահանջների պահպանման վերաբերյալ վստահության ապահովմանը [ISO 9000:2000]

Նշում՝ **Մարդասիրական ակնազերծման** մեջ ՈԱ նպատակն է հաստատել, որ ակնազերծման կառավարման փորձառություններն ու գործառնական ընթացակարգերը պատշաճ վիճակում են, կիրառվում են և կապահովեն սահմանված պահանջները անվտանգ, արդյունավետ և օպերատիվ ձևով: Ներքին ՈԱ կիրառործվի հենց **ակնազերծման կազմակերպությունների** կողմից, սակայն **մոնիտորինգի արտաքին մարմինների** կողմից իրականացվող արտաքին ստուգումները նույնպես պետք է տեղի ունենան:

B.9.

Որակի հսկողություն (ՈՀ)

Որակի կառավարման մաս, որն ուղղված է որակի պահանջների կատարմանը [ISO 9000:2000]

Նշում՝ ՈՀ-ը ենթադրում է վերջնական պրոդուկտի *ստուգազննում*: Մարդասիրական ակնազերծման դեպքում “պրոդուկտն” անվտանգ և մաքրված հողն է:

B.10.

Որակի կառավարում (ՈԿ)

Համակարգում է գործողությունները՝ կազմակերպությանը որակի վերաբերյալ ուղղություններ տալու և որակը հսկելու նպատակով [ISO 9000:2000]:

B.11.


Գործառնական ստանդարտ ընթացակարգեր (ԳՍԸ)

Մշտական չափորոշիչ ընթացակարգեր

Հրահանգներ, որոնք սահմանում են գործնական առաջադրանքը կամ աշխատանքը կատարելու նախընտրված կամ ներկայումս ստեղծված մեթոդը:

Նշում՝ Դրանց խնդիրը կազմակերպության ներսում կարգապահության, միաձևության, փոխկապվածության և ընդհանրության ճանաչման և չափման ենթակա մակարդակների խթանումն է՝ նպատակ ունենալով բարելավելու գործնական արդյունավետությունն ու ապահովությունը: Գործող ստանդարտ ընթացակարգերը (ԳՍԸ) պետք է արտացոլեն **տեղական** պահանջներն ու հանգամանքները:

Հավելված Գ (Տեղեկատվական) Ականազերծման գործընթաց



Հավելված Դ (Տեղեկատվական) ISO 9000

Սույն հավելվածը մի հատված է ՄԱԿ-ի այն փաստաթղթից, որն առնչվում է որակի կառավարման համակարգերի կիրառմանը: Այդ փաստաթուղթը մշակվել է ՄԱԿԱԾ-ի կողմից և ներկայացվել է Օտտավայում 1998թ-ի մարտին տեղի ունեցած Ականազերծման գործողությունների կառավարման միջազգային ժողովին: Այն թարմացվել է՝ արտացոլելու ISO 9000-ի վերանայման արդյունքում տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես նաև 2000թ-ի դեկտեմբերի 15-ին լույս տեսած ISO 9000:2000-ի շարքի հետագա թողարկումը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ականների մարդասիրական մաքրման և ականազերծման միջազգային չափորոշիչների հիմունքները մշակվել և համաձայնեցվել են Դանիայում 1996թ-ի հուլիսին տեղի ունեցած Ականների մաքրման տեխնոլոգիաների միջազգային համաժողովի ժամանակ: Ականների մաքրման բոլոր ասպեկտների համար չափանիշներ են սահմանվել, չափորոշիչներ են խորհուրդ տրվել և մաքրման աստիճանների վերաբերյալ նոր համընդհանուր սահմանում է առաջարկվել:

Համաժողովի ընթացքում առաջարկվել է նաև, որ որակի ապահովման և որակի հսկողության նկատմամբ համակարգված մոտեցում որդեգրվի; մասնավորապես պետք է գնվի որակի կառավարման համակարգերի (ներառյալ ISO 9000-ի կիրառման) համապատասխանեցումը ականազերծման գործողություններին: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային ուղղված իր 1996թ-ի զեկույցում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն ընդունել է ՄԱԿ-ի պատասխանատվությունն առ այն, որ նա շարունակելու այս աշխատանքների զարգացումը [թիվ A/51/540, 23 հոկտեմբերի 1996թ.]: Հիսունմեկերորդ համագումարի ժամանակ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հորդորեց անդամ պետություններին, միջպետական կազմակերպություններին, ՀԿ-ներին և հիմնադրամներին աջակցելու ականազերծման գործողությունների չափորոշիչների և որակի կառավարման ուղղությամբ ծավալվող այս աշխատանքներին [թիվ A/RES/51/149, 4 փետրվարի 1997թ.]:

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆՊԱՏԱԿԸ և ԾԱՎԱԼԸ

Տվյալ փաստաթուղթն ուսումնասիրում է որակի կառավարման համակարգերի (ՈԿՀ) և ISO 9000-ի կիրառման համապատասխանեցումը ականների մաքրմանը և հանդես գալիս առաջարկություններով:

Տվյալ փաստաթղթի ուշադրության առարկան է ՈԿՀ-ի կիրառումը ականազերծման առաջադրանքներում և գործընթացներում, չնայած առաջարկությունները տարածվում են ականազերծման գործողությունների նաև այլ տարրերի վրա:

ՈՐԱԿ՝ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

“Որակ” բառը մի քանի իմաստ ունի. գերազանցության աստիճան, հետևողականություն, համաձայնեցում պահաջի հետ, թերություններից, անկատարությունից կամ վնասից զերծ լինելը: ISO-ի պաշտոնական սահմանումն է ... “աստիճան, համաձայն որի անքակտելի առանձնահատկությունների մի շարքը բավարարում է պահանջները”:

“Ամբողջական որակի կառավարման” (ԱՈԿ) հայեցակարգը և “որակի կառավարման համակարգերի” (ՈԿՀ) մշակումը ծավալվեցին 1980-ականներին և դեկավար օղակների կողմից կիրառվեցին՝ արտադրության որոլտում գերազանցության աստիճաններին հասնելու համար: Այն ընկերությունները, որոնք որդեգրեցին իրենց կազմակերպությունների վերափոխման և իրենց անձնակազմին լիազորությունների փոխանցման փիլիսոփայությունը, գործունեության արտառոց ցուցանիշներ և հստակ մրցակցային դիրք ձեռք բերեցին: 1990-ների ընթացքում այս մոտեցումը կիրառվել է հանրային ոլորտում և շահույթ չհետապնդող կազմակերպություններում՝ գործունեության բարելավման նմանատիպ ցուցանիշներով:

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՈԿԶ-ի տարրերը

ՈԿԶ-ն բաղկացած է երեք բաղադրիչներից՝ 1) չափորոշիչներ և ընդհանուր ընթացակարգեր, որոնք սահմանում են կազմակերպության կանոնները, նորմերը և պահանջվող գործունեությունը; 2) կառավարման ներքին համակարգ (օրինակ՝ ISO 9001:2000), որը նպաստում է կազմակերպությանը հասնել այդ չափորոշիչներին և 3) հաստատություններին վերաբերող ձևակերպումներ, օրինակ՝ ազգային և միջազգային մասնագիտական մարմիններ, որոնք սահմանում են կանոններ, նորմեր և պահանջվող գործունեություն և մոնիթորինգի են ենթարկում իր անդամ կազմակերպությունների գործունեությունը: Փաստաթղթի տվյալ հաստատված կանոնադաշտն այս երեք բաղադրիչներին և կրնանարկի դրանց համապատասխանեցումը ակնազերծման գործողություններին:

ISO 9000

ISO 9000-ը կառավարման կանոնակարգ է ապահովում, որը հորդորում է կազմակերպությանը ապրանքներ կամ ծառայություններ մատուցել ըստ համաձայնեցված պահանջների: Այս պահանջները կարող են առաձին ապրանքի վերաբերյալ հաճախորդների հատուկ կարիքներն ու ակնկալիքները ներկայացնել կամ էլ դրանք որևէ ծառայության չափորոշիչները կարող են լինել, որոնք հարմար են համարվել մի մասնագիտացած մարմնի կողմից (օրինակ՝ փաստաբաններ կամ բժիշկներ): ISO 9000-ն *ինքն իրենով* ապրանք կամ ծառայություն չէ: Չկան ապրանքի ընդունման չափանիշներ: Այնուամենայնիվ, ISO 9000-ը կազմակերպություններից պահանջում է ունենալ կառավարման ընթացակարգեր, գործընթացներ և փորձառություն, որոնք շարունակաբար ապրանքներ և ծառայություններ կմատուցեն համաձայն պահանջվող չափորոշիչներին:

ISO 9000-ի հավատարմագրման երեք մակարդակները եղել են դեռ 1994թ-ի բնօրինակ համակարգում: ISO 9001-ը դիտվել է որպես որակի ամենահամապարփակ համակարգ, ISO 9002-ն ավելի նպատակահարմար է եղել այն կազմակերպությունների համար, որոնք ապրանք կամ ծառայություն են մատուցել, որի համար չի պահանջվել և ոչ մի հայեցակարգային նախագծման աշխատանք, իսկ ISO 9003-ը կիրառման համար ապահովել է որակի կատարյալ համակարգ, երբ հատուկ պահանջների համապատասխանեցումը կարելի էր հաստատել միայն վերջնական ստուգմամբ և փորձարկմամբ: 2000թ-ի դեկտեմբերի 15-ին այս երեք չափորոշիչները փոխարինվեցին մեկ չափորոշիչով՝ ISO 9001:2000-ով:

Այն կազմակերպությունները, որոնք հայցում են ISO 9001:2000-ի հավատարմագրում, պահանջվում է համապատասխանել չափանիշների մի համաձայնեցված շարքին. այդ հինգ հիմնական չափորոշիչային “բաժինները”, որոնք սահմանում են համաձայնեցված չափանիշները, բերված են Դ Հավելվածի հավելում 1-ում: Այդ չափանիշների մեկնաբանությունը կախված է կազմակերպության դերից և արդյոք կազմակերպությունն ապրանք թե ծառայություն է մատուցում: Բազմաթիվ մասնագիտացած մարմիններ ուղենիշներ են մշակել, որոնք վերաբերում են իրենց սեփական գործունեության ոլորտներին և մասնագիտություններին: Ներկայում գոյություն չունեն ակնազերծման գործողությունների վերաբերյալ համաձայնեցված միջազգային չափանիշներ կամ ուղենիշներ:

ISO 9001:2000-ի կիրառումը ակնազերծման գործողությունների մեջ

ISO 9001:2000-ի հինգ հիմնական չափորոշիչային “բաժինները” պետք է ձևափոխվեն՝ արտացոլելու ակնազերծմամբ զբաղվող կազմակերպությունների դերը:

Այս “բաժինների” պիտանելիությունն ակնազերծման համար կարելի է սահմանել՝ նշելով դրանք ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցերում, ինչպես դա արված է սույն փաստաթղթի Դ Հավելվածի հավելում 2-ում: Արդյունքում ստացված մատրիցն ավելի խորը և համապարփակ պատկերացում է ապահովում ականների և ՊՊՄ-ների մաքրման որակի բոլոր պահանջների վերաբերյալ: Օրինակ՝ ակնազերծման կազմակերպությունից, որը ISO 9001:2000-ի հավատարմագրում է հայցում, կակնկալվի ցուցադրել (ISO-ի 8.3 բաժնի օրինակով), թե ինչպես են կիրառվելու որակի ապահովման և որակի հսկողության իր ներքին ընթացակարգերը՝ հայտնաբերելու կրիտիկական

անհամապատասխանության դեպքեր; մի գործողություն, որն այսօր բազմաթիվ պայմանագրերով է պահանջվում: ՀԱԳՄՉ չափորոշիչների դեպքում կրիտիկական անհամապատասխանությունը սահմանվում է որպես հողի մի միավոր (սովորաբար 1 քառակուսի մետր), որը մեկ կամ մի քանի ականների կամ ՊՊՄ-ների վտանգներ է պարունակում: Ակնկալվում է, որ ականագերծման կազմակերպության ԳՄԸ-ները համահունչ լինեն մոնիտորինգի և մաքրմանը հաջորդող ստուգման պահաջներին, որոնք բերված են ՀԱԳՄՉ 07.40-ում և ՀԱԳՄՉ 09.20-ում:

Նման մոտեցումն ընդհանուր շրջանակ կապահովի կապալառուների և ենթակապալառուների համապատասխանությունն ու պատրաստվածությունն ուսումնասիրելու և գնահատելու որպես հավատարմագրման ընթացակարգերի մի մաս: Այն կհանգեցնի թափանցիկության, որն իր հերթին կնպաստի ապրանքի նկատմամբ վստահությանը:

Մասնագիտական մարմիններ և հաստատություններ

Այն կազմակերպություններն ու անհատները, ովքեր ձգտում են բավարարել համաձայնեցված մասնագիտական չափորոշիչները, սովորաբար կլիսում են ընդհանուր արժեքներն ու հավատը: Մասնագիտական մարմիններն ու հաստատությունները ներկայացնում են իրենց անդամների շահերն ու արտացոլում են նրանց կարծիքները: Նրանք ապահովում են համապատասխանեցումը համաձայնեցված չափորոշիչներին և պարտավորություն են հորդորում համատեղ արժեքների և հավատի նկատմամբ: Շատ հաստատություններ մանրամասն մասնագիտական ուղենիշներ են թողարկում ISO 9001:2000-ի հավատարմագրման վերաբերյալ, ինչպես նաև ընդհանուր խորհուրդներ ՈԿՀ առօրյա խնդիրների շուրջ:

Նման մարմինների և հաստատությունների կազմավորումը ականագերծման գործողությունների համայնքի կազմում բարենպաստ և շահավետ կլինի և պետք է խրախուսվի: Դրանք կապահովեն հատկապես օգտակար մեխանիզմ՝ մասնագիտական ավանդույթ ստեղծելու համար, ինչպես նաև ականագերծման գործողությունների ընդհանուր քաղաքականություն և փորձառություններ մշակելու համար: Դրանք կհամալրեն ՄԱԿ-ի գլխամասային գրասենյակի դերը:

Ակրեդիտացիայի շրջանում ավելի դյուրին կլինի նման մարմիններ և հաստատություններ ստեղծել ազգային և տարածաշրջանային մակարդակներում, չնայած միջազգային անդամակցումն ու համագործակցությունը պետք է խրախուսվեն: Այսօր միայն մեկ նման մարմնի գոյության մասին է հայտնի; դա Ռազմամթերքի մաքրման ինժեներների ինստիտուտն է (IMCE), որը հիմնադրվել է 1998թ.:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1996թ-ի հոկտեմբերի 23-ի Գլխավոր ասսամբլեայի 51/540 որոշումը ՄԱԿ-ին ապահովեց պարտավորությամբ և մանդատով՝ մշակելու ականագերծման գործողությունների արդյունավետ միջազգային չափորոշիչներ և ապահովելու որակի կառավարման կիրառման վերաբերյալ ուղեցույց: Այդ մանդատն ուժի մեջ դնելու համար տրվում են հետևյալ առաջարկությունները՝

- Ականագերծման գործողություններով զբաղվող կազմակերպություններին պետք է հորդորել՝ մշակելու ռազմավարություններ, ստեղծելու կառավարման համակարգեր և ցուցադրելու ընթացակարգեր և փորձառություններ, որոնք համահունչ են որակի ամբողջական կառավարման սկզբունքներին:
- Կարիք կա ստեղծելու միջազգային ուղենիշների մի փաթեթ՝ ականագերծման գործողությունների մեջ ISO 9000-ի կիրառման վերաբերյալ:
- Մասնագիտական մարմինների հիմնադրումը ականագերծման գործողությունների համայնքի կազմում պետք է խրախուսվի, սակայն դրանց իրավական կարգավիճակը, կանոնադրությունն ու կառուցվածքը պետք է խիստ մոնիտորինգի ենթարկվեն:

Հավելված Դ-ի հավելում 1 (Տեղեկատվական) ISO 9001:2000-ի պահանջվող ընթացակարգեր

Հետևյալ հինգ առարկայական ոլորտները ներկայացնում են ISO 9001:2000-ի հիմնական չափորոշիչային «բաժինները», որոնք պարունակում են բազմաթիվ ենթաբաժիններ, որ պետք է բավարարվեն՝ ստանալու ISO 9001:2000-ի հավատարմագրումը: Յուրաքանչյուր ենթաբաժին պարունակում է ավելի խորը հատկորոշված պահանջներ: Ընդհանուր առմամբ կա 184 առարկա, և դրանք պահանջում են որոշակի փաստաթղթի կամ գործընթացի վկայություն՝ քաղաքականություն կամ փորձառնություն, կամ էլ երկուսը միասին: Յուրաքանչյուր խնդրի համապատասխանության վերաբերյալ ուղեցույցը տրամադրվում է մասնագիտացած մարմինների և հաստատությունների կողմից, իսկ ականագերծման ուղեցույցը բերված է Հավելում 2-ում:

- 4. Որակի կառավարման համակարգ**
 - 4.1. Ընդհանուր պահանջներ
 - 4.2. Փաստաթղթային պահանջներ
- 5. Կառավարման պատասխանատվություն**
 - 5.1. Կառավարման պարտավորություն
 - 5.2. Ուշադրություն հաճախորդի նկատմամբ
 - 5.3. Որակի քաղաքականություն
 - 5.4. Պլանավորում
 - 5.5. Պատասխանատվություն, իրավասություն և հաղորդակցում
 - 5.6. Կառավարման վերանայում
- 6. Ռեսուրսների ապահովում**
 - 6.1. Ռեսուրսների տրամադրում
 - 6.2. Մարդկային ռեսուրսներ
 - 6.3. Էնթալառուցվածք
 - 6.4. աշխատանքային միջավայր
- 7. Պրոդուկտի սպառում**
 - 7.1. Պրոդուկտի սպառման պլանավորում
 - 7.2. Հաճախորդների հետ կապված գործընթացներ
 - 7.3. Դիզայն և մշակում
 - 7.4. Գնում
 - 7.5. Արտադրություն և ծառայության ապահովում
 - 7.6. Մոնիտորինգի և չափման միջոցների վերահսկում
- 8. Չափում, վերլուծություն և բարելավում**
 - 8.1. Ընդհանուր
 - 8.2. Մոնիտորինգ և չափում
 - 8.3. Անհամապատասխան/անորակ ապրանքի վերահսկում
 - 8.4. Տվյալների վերլուծություն
 - 8.5. Բարելավում

ISO 9001:2000 և
ՀԱԳՄՉ չափորոշիչներ
(Տեղեկատվական)

ISO 9001:2000-ի բաժիններ



ՀԱԳՄՉ
չափորոշիչներ



	01.10	02.10	03.10	03.20	03.30	03.40	04.10	05.10	06.10	07.10	07.20	07.30	07.40	08.10	08.20	08.30	08.40	09.10	09.20	09.30	09.40	09.50	10.10	10.20	10.30	10.40	10.50	10.60	
01.10	ՀԱԳՄՉ-երի կիրառման ուղեցույց																												
02.10	Ավանգրծման գործընթացների ծրագրի էմբոս																												
03.10	Սարքավորումների գնման ուղեցույց																												
03.20	Գնումների գործընթաց																												
03.30	Փորձարկում և գնահատում																												
03.40	Հետազոտությունների ուղեցույց																												
04.10	Հավասարակշռ. գործուն. տերմինների սահմանման հավաքածու																												
05.10	Տեղեկությունների կառավարում																												
06.10	Վերապատրաստման կառավարում																												
07.10	Կառավարում (շարք)																												
07.20	Հավակական. գործուն. պայմանագրերի կառավարման ուղեցույց																												
07.30	Ավանգրծման կազմակերպությունների հավասարակարգում																												
07.40	Մոնիտորինգ (շարք)																												
08.10	Հավակական. Գործուն. Շտրիմանոր գնահատում																												
08.20	Տեխնիկական հետազոտում																												
08.30	Հետ-մաքրման փաստաթղթեր և վերանայում																												
08.40	Կտանգների կետանշում																												
09.10	Սարքման պահանջներ																												
09.20	Հետ-մաքրման ստուգումներ և նմուշներ																												
09.30	ԱՊԶ																												
09.40	Ավանգրծման հայտարարագրի շերտ (շարք)																												
09.50	Մեխանիկական ավանգրծում																												
10.10	ԱնԱՀ-ի ընդհանուր պահանջներ																												
10.20	Ավանգրծման աշխատավայրի սպասարկություն																												
10.30	ԱՊՄ																												
10.40	Ավանգրծման բժշկական օգնություն																												
10.50	Պայթուցիկների պահեստավ. փոխադրում և կիրառում																												
10.60	Միջարկների գեկուցում և հետաքննություն																												
6.3	Ենթակառուցվածք																												
6.4	Աշխատանքային միջավայր																												
7	Պրոդուկտի սպառում																												
7.1	Պրոդուկտի սպառման պլանավորում																												
7.2	Հաճախորդների հետ կապված գործընթացներ																												
7.3	Նախագծում և մշակում																												
7.4	Գնումներ																												
7.5	Արտադրություն և ծառայությունների մատուցում																												
7.6	Մոնիտորինգի և չափման սարքերի վերահսկում																												
8	Չափում, վերլուծություն և բարելավում																												
8.1	Ընդհանուր																												
8.2	Մոնիտորինգ և չափում																												
8.3	Անհամապատասխան պրոդուկտի վերահսկում																												
8.4	Տվյալների վերլուծություն																												
8.5	Բարելավում																												

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՁ-երի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՁ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ անգամ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական նկատառումներից:

Այս ՀԱԳՄՁ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են, և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՁ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով *«Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն»* արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՁ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ, և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցում՝ մինչև նոր վերանայման իրականացումը:

ՀԱԳՄՁ-ի ամենավերջին փոփոխություններն այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՁ-ի կայքէջում՝ www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	1 դեկտեմբերի 2004թ.	1. Ֆորմատի փոփոխություններ: 2. Տեքստի խմբագրական չնչին փոփոխություններ: 3. Փոփոխություններ տերմիններում, սահանումներում և հապավումներում ըստ անհրաժեշտության՝ ապահովելու տվյալ ՀԱԳՄՁ-ի համապատասխանեցումը ՀԱԳՄՁ 04.10-ին: 4. Նշանակալից փոփոխություններ՝ a) Բաժին 4.1՝ ընդհանուր ամբողջական վերանայում:
2	23 հուլիսի 2005թ.	1. Բաժին 4.4՝ երրորդ պարբերություն, երկրորդ նախադասություն, մի բաժնի ընդգրկում, որը վերաբերում է պատահարների/միջադեպերի զեկույցներին, որոնք հանդես են գալիս որպես հավելված հետ-նախագծային վերանայման հաշվետվություններում: 2. Հավելված Բ՝ «Որակի ապահովում (ՈՍ, ՉԱ)» սահմանման փոփոխություն՝ համահունչ դարձնելով ՀԱԳՄՁ 04.10-ին:
3	1 օգոստոսի 2006թ.	1. Չնչին փոփոխություններ/լրացումներ նախաբանի առաջին և երկրորդ պարբերություններում: 2. Բաժին 4.1՝ չորրորդ պարբերություն, առաջին նախադասության հեռացում: 3. «Ականներ և ՊՊՄ-ներ » տերմինի ավելացում: 4. «Սպառնալիք» տերմինի հեռացում ՀԱԳՄՁ-երի ողջ շարքից: 5. Բաժին 4.2.6՝ նոր նախադասության ավելացում երկրորդ պարբերությունում: 6. Բաժին 4.3.2՝ չնչին տեքստային փոփոխություններ առաջին պարբերությունում: 7. Բաժին 4.3.3.2՝ վերնագրի փոփոխություն, տեքստային փոփոխություններ առաջին պարբերությունում և վերջին պարբերության հեռացում: 8. Հավելված Բ՝ «գենդերային ուղղորդման» տերմինի նոր սահմանում: